ԵԴ/1145/11/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Երևան քաղաքի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության դատարան,
նախագահող դատավոր՝ Գ.Պողոսյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Մ.Պապոյան

27 դեկտեմբերի 2024 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով Գարեգին Հարությունյանի ներկայացուցիչ Հովհաննես Փարսադանյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ

քրեական դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 27-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2020 թվականի նոյեմբերի 19-ին Գարեգին Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ Ս.Խաչատրյանին, որին ի պատասխան՝ 2020 թվականի նոյեմբերի 23-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ Խ.Մեջլումյանը թիվ 18-395մ/դ-20 գրությամբ պատասխանել է, որ այն կոնկրետ հանցագործության փաստերի մասին տեղեկություններ չի պարունակում:

1.1. Վերոնշյալ գրության դեմ Գ.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանի բողոքին ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Հ.Բաղդասարյանը 2020 թվականի դեկտեմբերի 9-ի գրությամբ նշել է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայություն ներկայացված հաղորդումը չի պարունակում ենթադրաբար կատարված հանցագործության հատկանիշների առկայությունը մատնանշող տվյալներ:

2. ՀՀ հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ Խ.Մեջլումյանի վերոնշյալ գրության դեմ Գ.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանի բողոքի քննության արդյունքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2021 թվականի մարտի 10-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու մասին՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնել որոշմամբ արձանագրված՝

Գ.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանի իրավունքների և օրինական շահերի խախտումը:

3. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2021 թվականի հոկտեմբերի 27-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մարտի 10-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ ընդունվել է վարույթ[1]:

Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

6. Ըստ բողոքաբերի՝ ստարադաս դատարանների այն եզրահանգումը, որ Գ.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանի կողմից ներկայացված հաղորդման մեջ նշվել են կոնկրետ հանցագործության հատկանիշներ մատնանշող տվյալներ, որոնք բավարար են դրանցում նշված տեղեկությունները քննարկելու, ստուգելու և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը կայացնելու համար, անհիմն են՝ նկատի ունենալով, որ հաղորդման մեջ առկա չեն գործող օրենսդրական կարգավորումների գործադրմամբ ստուգման ենթակա տեղեկություններ:

---

[1] Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

6.1. Բողոքի հեղինակը նշել է, որ Գ.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանի հաղորդման բովանդակությունից ակնհայտ է, որ դատական ակտ չկատարելու հանցակազմի առերևույթ առկայության վերաբերյալ դատողությունները հիմնված են այն հանգամանքի վրա, որ Առաջին ատյանի դատարանի կողմից 2020 թվականի օգոստոսի 18-ին կայացվել է գործն ըստ էության չլուծող դատական ակտ, որն ըստ Գ.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանի՝ ենթակա է եղել անմիջապես պարտադիր կատարման:

6.2. Բողոքաբերը նշել է նաև, որ թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, սակայն չի նախատեսում այդ պահից դատական ակտն ի կատար ածելու պարտադիր պահանջ: Ավելին, բողոքաբերը վկայակոչել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված այն պահանջը, որ օրենքով նախատեսված դեպքերում բողոք տալը կասեցնում է բողոքարկվող որոշումն ի կատար ածելը:

6.3. Բացի այդ, բողոք բերած անձը հավելել է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտի՝ հրապարակման պահից, անկախ դրա դեմ բողոք ներկայացված լինելու հանգամանքից, կատարման ենթակա լինելու վերաբերյալ հաղորդում ներկայացրած անձի և դատարանների հետևությունները չեն բխում նաև նման դատական ակտերի կատարման արդեն իսկ իրավաչափորեն ձևավորված պրակտիկայից: Մասնավորապես, բողոքաբերը փաստել է, որ դատական պրակտիկան զարգացել է այն ուղղությամբ, որ այդ դատական ակտերն ի կատար են ածվում դրանցում նշված բողոքարկման ժամկետներն անցնելուց հետո, իսկ բողոքարկման դեպքում՝ վերադաս դատական ատյանների կողմից համապատասխան որոշում կայացնելուց հետո:

Ըստ բողոքաբերի՝ հակառակ մոտեցման պայմաններում, կարժեզրկվի բողոքարկման ինստիտուտը և գործնականում կառաջանան փակուղային իրավիճակներ:

7. Ըստ բողոքաբերի՝ բողոքարկվող դատական ակտում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը որևէ կերպ չի անդրադարձել վերաքննիչ բողոքում նշված՝ ֆիզիկական անձի կողմից ներկայացված դիմումը՝ որպես հանցագործության մասին

հաղորդում գնահատելու՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներով սահմանված չափանիշներին, այլ սոսկ վկայակոչելով օրենսդրական կարգավորումները և այդ դիրքորոշումները՝ պարզապես արձանագրել է, որ Գ.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանի հաղորդումը հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը կայացնելու համար, քանի որ պարունակում է տվյալներ կոնկրետ հանցագործության մասին:

8. Վերոգրյալի հիման վրա, ՀՀ գլխավոր դատախազը խնդրել է ամբողջությամբ բեկանել կամ փոփոխել 2021 թվականի մարտի 10-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 27-ի դատական ակտը՝ մերժելով Գ.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանի կողմից ներկայացված բողոքը:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

9. Գ.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանի՝ «Հաղորդում հանցագործության մասին» վերտառությամբ դիմումով վերջինս փաստել է, որ. *«(…) ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2020 թվականի օգոստոսի 18-ին որոշում է կայացրել թիվ 18166818 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման դեմ ներկայացված իմ բողոքը բավարարելու մասին և վարույթն իրականացնող մարմնին <u>պարտավորեցրել է վերացնել</u> ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Լ.Համբարձումյանի կողմից 2019 թվականի օգոստոսի 27-ին կայացված թիվ 18166818 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին և այդ որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին ՀՀ դատախազության Շիրակի մարզի դատախազի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 23-ին կայացված որոշումներով տուժող Գարեգին Հարությունյանի խախտված իրավունքները: Դատարանի կողմից կայացված հիշյալ որոշումը հանդիսանում է գործն ըստ էության չլուծող դատական ակտ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:*

(…)

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչություն իմ կողմից կատարված հարցմանն ի պատասխան՝ գրությամբ հայտնել են, որ քրեական գործով վարույթը վերսկսելու մասին որոշում կայացվելու դեպքում այդ մասին կհաղորդվի ինձ: Հիշյալ պատասխան գրությունը ենթադրում է, որ նախաքննություն իրականացնող մարմինը դեռևս չի ստացել քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ դատախազի որոշում, որպեսզի վերսկսվի քրեական գործով կարճված վարույթը:

ՀՀ Շիրակի մարզի դատախազի պաշտոնակատարին ուղղված իմ հարցմանն ի պատասխան՝ մարզի դատախազի տեղակալ Ա.Ավետիսյանը հայտնել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում Շիրակի մարզի դատախազության կողմից հիշատակված Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բողոքարկվել է վերաքննության կարգով, հետևաբար քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման վերացման հարցին անդրադարձ կկատարվի բողոքի քննարկման արդյունքում:

Փաստացի թիվ 18166818 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը քրեական գործի նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կամ վերադաս դատախազի կողմից մինչև այժմ վերացված չէ:

ՀՀ քրեադատավարական օրենսդրության կարգավորումների համաձայն՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտը օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և այդ ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելը չի կասեցնում դրա ուժի մեջ մտնելը:

Ըստ այդմ գտնում եմ, որ առերևույթ առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում ՀՀ դատախազության համապատասխան պաշտոնատար անձանց կողմից դիտավորությամբ չկատարելու ենթադրյալ հանցագործության դեպք: (…)»[2]:

---

[2] Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 7-8:

10. ՀՀ հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ Խ.Մեջլումյանի՝ 2020 թվականի նոյեմբերի 23-ի գրության համաձայն՝ *«(…) Հաղորդում հանցագործության մասին» վերտառությամբ դիմումը որպես հանցանքի մասին հաղորդում դիտարկելու և դրա կապակցությամբ համապատասխան դատավարական ակտ կայացնելու հիմքերը բացակայում են, քանի որ այն, սուբյեկտիվ բնույթի դատողություններից ու ենթադրություններից զատ, կոնկրետ հանցագործության փաստերի մասին տեղեկություններ չի պարունակում:*

Միաժամանակ հայտնում եմ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը (այսուհետ՝ դատական ակտը) դատական ակտում սահմանված ժամկետում կամ ժամկետ սահմանված չլինելու դեպքում դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց կողմից դիտավորությամբ չկատարելու համար, մինչդեռ ձեր դիմումից հետևում է, որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թվականի օգոստոսի 18-ի դատական ակտը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում Շիրակի մարզի դատախազության կողմից բողոքարկվել է դատաքննության կարգով (…)»[3]:

11. ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Հ.Բաղդասարյանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 9-ի գրության համաձայն՝ *«(…) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ դատախազը լիազորված է լուծել քննիչի և հետաքննության մարմնի որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքները, մինչդեռ 2020 թվականի դեկտեմբերի 3-ի բողոքով Ձեր անհամաձայնությունն եք հայտնել ՀՀ հատուկ քննչական ծառայության*

[3] Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 9:

կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Խ.Մեջլումյանի անգործությանը, հետևաբար դատախազը լիազորված չէ քննարկել այն և կայացնել որոշում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում կարող եք քննիչի անգործությունը բողոքարկել դատարան:

Միաժամանակ, պարզաբանում եմ, որ ՀՀ հատուկ քննչական ծառայություն ներկայացված հաղորդումը չի պարունակում ենթադրաբար կատարված հանցագործության հատկանիշների առկայությունը մատնանշող տվյալներ, այլ բովանդակում է բացառապես սուբյեկտիվ գնահատականներ և առարկություններ, հետևաբար (…) այն չի կարող դիտվել որպես քրեական գործ հարուցելու առիթ (…)»[4]*:*

<u>Ստորադաս դատարանների դիրքորոշումները.</u>

12. Առաջին ատյանի դատարանն իր 2021 թվականի մարտի 10-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Քննիչն իր գրությամբ չի վկայակոչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավակարգավորումը և դատաքննությամբ նշեց, որ նպատակահարմար չի գտել նշել այն:*

(…) ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի առաջին մասը պատասխանատվություն է նախատեսում դատական ակտը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց կողմից բացառապես դիտավորությամբ չկատարելու համար, ուստի համապատասխան պաշտոնատար անձի մոտ դիտավորության առկայությունը կամ բացակայությունը կարող էր հաստատվել կամ հերքվել հաղորդման կապակցությամբ կատարված քննության արդյունքում:

Դատարանի գնահատմամբ՝ Դիմողի հաղորդումը հանդիսանում է հանցագործության մասին հաղորդում և քրեական գործ հարուցելու առիթ, որի կապակցությամբ իրավասու մարմինը՝ համապատասխան պաշտոնատար անձը, պարտավոր էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով

---

[4] Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 13:

սահմանված ժամկետում կայացնելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը՝ պայմանավորված ստուգման արդյունքներով:

(…)

Հետևաբար, (…) դատարանը, գտնում է, որ Դիմողի հաղորդման կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության և հատուկ քննչական ծառայության կողմից թույլ է տրվել անգործություն, որով խախտվել են Դիմողի իրավունքներն ու օրինական շահերը:

Դատարանը, նաև արձանագրելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, գտնում է, որ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 18.08.2020թ. որոշումը ենթակա էր կատարման:

Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումներին, ապա դատարանը գտնում է, որ նշված դեպքում այն կիրառելի չէ վերը նշված պատճառաբանություններով:

Դատարանը նաև պարզաբանում է, որ վերը նշված եզրահանգումները չեն կարող մեկնաբանվել որպես հանցանքի կատարման մեջ որևէ անձի մեղքի կանխորոշվածության վերաբերյալ դատողություններ:

Հետևաբար, Հ.Փարսադանյանի դիմումը հանդիսանում է հանցագործության մասին հաղորդում և քրեական գործ հարուցելու առիթ, որի կապակցությամբ իրավասու մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր էր կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը (…)»[5]*:*

13. Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշումն անփոփոխ թողնելու մասին իր դատական ակտում արձանագրել է հետևյալը. *«(…) [Ա]ռաջին ատյանի կողմից տրված եզրահանգումը ընդունելի է նաև Վերաքննիչ դատարանի համար, սակայն Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ ՀՀ վճռաբեկ*

[5] Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 44-46:

դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշման համատեքստում, արձանագրելով, որ օրենսդրի կողմից սահմանվել է նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր նորմ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդված) և հատուկ նորմ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 1-ին մաս), որոնց միաժամանակյա կիրառելիությունը կարող է հանգեցնել իրավական անորոշության, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ տվյալ դեպքում 103-րդ հոդվածի 4-րդ մասը կիրառելի չէ վերը նշված հիմնավորմամբ:

Հետևաբար առաջնորդվելով նույն իրավահարաբերությունը կարգավորող հատուկ նորմով՝ ՀՀ վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ.

(…) քրեադատավարական օրենսդրությունը սահմանում է քրեական գործի հարուցման հարցը լուծելու համար անհրաժեշտ միասնական և պարտադիր կարգ, որը ենթադրում է հանցագործության մասին հաղորդման ընդունում և գրանցում, դրա մեջ արձանագրված փաստական տվյալների ստուգում և պատճառաբանված որոշման կայացում, իսկ որպեսզի հաղորդումը հիմք հանդիսանա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը կայացնելու համար, այն պետք է բովանդակի տվյալներ կոնկրետ հանցագործության մասին, ինչը տվյալ դեպքում առկա է եղել (դիմողի ներկայացուցիչ Հովհաննես Փարսադանյանի կողմից ներկայացված հաղորդման մեջ ուղղակիորեն վկայակոչվել են քրեական օրենքով արգելված ենթադրյալ արարքների կատարման հատկանիշներ) (…)»[6]:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյո՞ք դիմող Գ.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանի իրավունքների խախտման ու վարույթն իրականացնող մարմնին այն վերացնելուն պարտավորեցնելու վերաբերյալ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների հետևությունները:

---

[6] Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 124-130:

15. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:*

15.1. Վկայակոչված իրավադրույթի բովանդակության հաշվառմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ պաշտոնատար անձինք գործունեություն ծավալելիս պարտավոր են խստորեն գործելու Սահմանադրությամբ կամ օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում, հակառակ պարագայում թույլ կտրվի օրինականության սկզբունքի խախտում, ինչից որևէ բացառություն որևէ պետական մարմնի համար Սահմանադրությամբ նախատեսված չէ[7]:

16. Պայմանավորված սույն գործի փաստական հանգամանքներով՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ քրեադատավարական համակարգում դատախազի ունեցած գործառնական դերին ու լիազորություններին: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով քրեական հետապնդման մարմինների՝ օրենքով վերապահված լիազորությունների շրջանակին և համալիր վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-57-րդ հոդվածները, փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ամրագրում է քննության ընթացքում նշված մարմիններից յուրաքանչյուրի գործառույթը, վերջիններիս՝ վարույթին մասնակցելու նպատակը և սահմանված լիազորություններն իրացնելու իրավաչափ միջոցները՝ մասնավորապես սահմանելով, որ դատախազն օրենքով սահմանված կարգով նշանակված պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում, ի թիվս այլնի, իրականացնում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, քննիչը՝ պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում քրեական գործով իրականացնում է նախաքննություն, իսկ հետաքննության մարմինը՝ հանցագործությունները և դրանք

[7] Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ՍԴՈ-766 որոշումը:

կատարող անձանց բացահայտելու, հանցագործությունը կանխելու և խափանելու նպատակով ձեռնարկում է համապատասխան օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական միջոցառումներ, ինչպես նաև հարուցված քրեական գործով իրականացնում է անհետաձգելի քննչական գործողություններ: Քրեական հետապնդման մարմինները լիազորված են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են իրենց գործառույթներն իրականացնելու համար: Վարույթի մասնակից պաշտոնատար անձը կատարում է օրենքով իրեն վերապահված կոնկրետ գործողություններ՝ դրանով իսկ հնարավորություն ունենալով ոչ միայն ընտրել իր վարութային վարքագիծը, այլև կանխատեսել դրա հետևանքները[8]:

17. Անդրադառնալով մինչդատական վարույթի շրջանակում քննիչի գործունեության մեջ հանցագործության հատկանիշների առկայության հարցի լուծան խնդրին՝ Վճռաբեկ դատարանն *ԱրտեմԽաչիկյանի* գործով իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. *«[Քրեական պատասխանատվության հարցի լուծումն] (…) անմիջականորեն ենթադրում է վարութային ակտերի՝ քննիչի կարգավիճակի հետ համատեղելիության տեսանկյունից գնահատում: (…)*

Այս ընթացակարգի առումով, որպես կարգավիճակից բխող վարութային ակտեր կարող են դիտարկվել այնպիսիք, որոնց կատարումը ***պայմանավորված է*** *քննիչի* ***գործառույթի իրականացման անհրաժեշտությամբ՝*** *օրենսդրությամբ նրան* ***վերապահված լիազորությունների կատարման միջոցով****: Ընդ որում, ինչպես արդեն նշվել է, լիազորությունների իրացումը պետք է համապատասխանի օրենքների պահանջներին, ինչը բխում է սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրված օրինականության սկզբունքի պահանջներից: Վերոգրյալից բխում է այն տրամաբանությունը, որ եթե քննիչը լիազորություններն իրականացնելիս առաջնորդվել է իր մասնավոր, անձնական շահով (ultra vires) կամ դա իրականացրել է օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների անցմամբ, ապա նման*

[8] 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենգրքի 35-րդ հոդվածով նախատեսված՝ վարույթի հանրային մասնակիցների ինքնուրույնության և պատասխանատվության մասով տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Մուշեղ Պողոսյանի* գործով 2024 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ ՀԿԴ/0282/06/23 որոշման 18-19-րդ կետերը:

ընթացակարգը չի կարող առնչություն ունենալ քննիչի մասնագիտական գործունեության հետ և պետք է գնահատվի որպես քննիչի կարգավիճակից չբխող:

(...) [Ք]րեական վարույթի շրջանակում քննիչի կողմից իրականացվող գործունեության առթիվ քրեական վարույթի նախաձեռնումը կախված է կայացված որոշման կամ կատարված գործողության՝ քննիչի կարգավիճակից առերևույթ չբխող լինելու հիմնավորումից: Այսինքն՝ քրեական վարույթի շրջանակում քննիչի կողմից իրականացվող ընթացակարգի առթիվ քրեական վարույթ կարող է նախաձեռնվել այն դեպքում, երբ առկա տեղեկություններով՝ փաստվող դեպքին, գործողությանը կամ անգործությանը ողջամտորեն կարող է տրվել քննիչի կարգավիճակի հետ կապված չլինելու, և միաժամանակ՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական:

Մյուս կողմից էլ, հարկ է նկատել, որ շահագրգիռ անձինք իրենց հաղորդումը ներկայացնելիս պետք է հիմնավորեն վերոնշյալ չափանիշի առկայությունը: Այս առումով Վճռաբեկ դատարանը հատկապես կարևոր է համարում արձանագրել, որ քրեական վարույթ նախաձեռնելու կառուցակարգը չի կարող գործադրվել, եթե հանցանքի մասին հաղորդումն առերևույթ բովանդակում է քրեական վարույթի շրջանակում քննիչի կայացրած (ընդունած) վարութային ակտերի՝ քրեադատավարական օրենքի պահանջներից չբխելը մատնանշող տվյալներ: Մասնավորապես՝ հանցանքի մասին հաղորդմամբ փաստվող դեպքը, գործողությունը կամ անգործությունը կարող են առերևույթ պարունակել գործով թույլ տրված դատավարական խախտումների մասին տվյալներ կամ կայացված որոշումների կամ կատարված գործողությունների առնչությամբ դատավարության մասնակցի տրված գնահատականներ: Նշվածը խնդրո հարցի համատեքստում չի կարող դիտարկվել որպես լեգիտիմ շահի պաշտպանության մեխանիզմ, քանի որ քննիչը չի կարող քրեական հետապնդման ենթարկվել վարութային գործողությունների և դատավարական ակտերի բովանդակության, այդ թվում՝ իրավական նորմերի տարբերվող մեկնաբանության կամ վերապահված լիազորությունների ու պարտականությունների կենսագործման կարգի խախտման համար, եթե բացակայում են սույն որոշմամբ մատնանշված անհրաժեշտ պայմանները:

Վերոգրյալը որևէ պարագայում չի կարող դիտվել որպես քննիչին տրամադրվող անձնական արտոնություն. քրեադատավարական կարգի խախտումը կարող է առաջացնել այլ իրավական հետևանքներ, օրինակ՝ դառնալ վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք»[9]:

18. Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված մեկնաբանությունը կիրառելի է նաև դատախազի կողմից իր լիազորություններից բխող գործողություններ կատարելու, որոշումներ կայացնելու կամ անգործություն դրսևորելու դեպքում: Մասնավորապես, դատախազի քրեադատավարական գործունեության առնչությամբ ենթադրյալ հանցագործության դեպքի առթիվ քրեական գործ կարող է հարուցվել այն դեպքում, երբ առկա տեղեկություններով՝ փաստվող դեպքին, գործողությանը կամ անգործությանը ողջամտորեն կարող է տրվել դատախազի կարգավիճակի հետ կապված չլինելու, և միաժամանակ՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական: Դատախազը չի կարող քրեական հետապնդման ենթարկվել իր կայացրած որոշումների կամ կատարած գործողության կամ դրսևորած անգործության, այդ թվում՝ իրավական նորմերի տարբերվող մեկնաբանության կամ վերապահված լիազորությունների ու պարտականությունների կենսագործման կարգի խախտման համար, եթե բացակայում են նշված պայմանները: Շահագրգիր անձինք դատախազի գործունեության առնչությամբ ենթադրյալ հանցանքի մասին հաղորդում ներկայացնելիս պետք է հիմնավորեն վերոնշյալ չափանիշի առկայությունը:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Գ.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանը՝ «Հաղորդում հանցագործության մասին» վերտառությամբ դիմումում փաստարկել է, որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2020 թվականի օգոստոսի 18-ին որոշում է կայացրել քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման դեմ ներկայացված բողոքը բավարարելու մասին, և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել է

[9] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արտեմ Խաչիկյանի* գործով 2023 թվականի փետրվարի 10-ի թիվ ԵԴ/0577/11/20 որոշման 15-16-րդ կետերը:

վերացնել տուժող Գարեգին Հարությունյանի իրավունքների խախտումը, սակայն թիվ 18166818 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը քրեական գործի նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կամ վերադաս դատախազի կողմից չի վերացվել[10]:

- ՀՀ հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ Խ.Մեջլումյանը Գ.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանին գրավոր հայտնել է, որ «Հաղորդում հանցագործության մասին» վերտառությամբ դիմումը չի համապատասխանում հանցագործության մասին հաղորդման որոշակիության բովանդակային չափանիշին, ուստի բացակայում է համապատասխան օրենսդրական կառուցակարգերը գործադրելու հիմքը, քանի որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 18-ի դատական ակտը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում, Շիրակի մարզի դատախազության կողմից բողոքարկվել է[11]:

- Քննիչի վերը նշված գրության դեմ Գ.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն, որին, ի պատասխան, դատախազը գրությամբ պատասխանել է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայություն ներկայացված հաղորդումը չի պարունակում ենթադրաբար կատարված հանցագործության հատկանիշների առկայությունը մատնանշող տվյալներ, հետևաբար, այն չի կարող դիտվել որպես քրեական գործ հարուցելու առիթ[12]:

- Գ.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանի բողոքի քննության արդյունքում, Առաջին ատյանի դատարանն արձանագրել է «Հաղորդում հանցագործության մասին» վերտառությամբ դիմումի կապակցությամբ գրությամբ պատասխանելու ոչ իրավաչափությունը՝ փաստելով, որ այն հանցագործության

---

[10] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:
[11] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:
[12] Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

մասին հաղորդում է և քրեական գործ հարուցելու առիթ: Առաջին ատյանի դատարանը գտել է, որ Գ.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանի հաղորդման կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության և հատուկ քննչական ծառայության կողմից թույլ է տրվել անգործություն, քանի որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 18-ի որոշումը ենթակա էր կատարման[13]:

- Վերաքննիչ դատարանը նույն պատճառաբանությամբ անփոփոխ է թողել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը[14]:

20. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-18-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, դիմումում նշված փաստերը համարելով բավարար՝ այն որպես առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում դիտարկելու, վարութային միջոցներ ձեռնարկելու և դատավարական ակտ կայացնելու համար, պատշաճ վերլուծության ու իրավական գնահատման չեն ենթարկել ներկայացված դիմումի բովանդակությունը:

21. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Գ.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանի դիմումը որպես առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում դիտարկելու և այն քննարկելուն, ստուգելուն ու լուծելուն ուղղված դատավարական կարգավորումները գործադրելու հնարավորությանը, արձանագրում է, որ դիմողի կողմից չեն ներկայացվել փաստական տվյալներ և չի փաստարկվել դատախազի դատավարական գործունեության այնպիսի դրսևորում, որին ողջամտորեն կարող էր տրվել վերջինիս կարգավիճակից չբխելու, և միաժամանակ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներին համապատասխանելու նախնական իրավական գնահատական:

21.1. Այսպես, դիմողը դատական ակտը չկատարելու ենթադրյալ հանցանքի մասին հաղորդումը հիմնավորել է նրանով, որ թիվ 18166818 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման դեմ

---

[13] Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:
[14] Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

ներկայացված բողոքը բավարարելու և վարույթն իրականացնող մարմնին տուժող Գ.Հարությունյանի խախտված իրավունքները վերացնելու պարտականություն սահմանելու մասին Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 18-ի որոշումը դատախազի կողմից չի կատարվել, քանի որ վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը չի վերացվել: Իսկ ստորադաս դատարանները, փաստելով, որ Հ.Փարսադանյանի կողմից ներկայացված հաղորդման մեջ ուղղակիորեն վկայակոչվել են քրեական օրենքով արգելված ենթադրյալ արարքի կատարման հատկանիշներ, պատշաճ չեն գնահատել այն հանգամանքը, որ դատախազն իրացրել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 18-ի որոշման բողոքարկման իր դատավարական լիազորությունը, որն ուղղակիորեն բխում է դատախազության սահմանադրական գործառույթներից: Ինչ վերաբերում է ստորադաս դատարանների այն փաստարկին, որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 18-ի որոշումը՝ որպես գործն ըստ էության չլուծող դատական ակտ, կայացման պահից մտել է օրինական ուժի մեջ և ենթակա էր կատարման, ապա այս առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում բողոքաբերի այն պնդմանը, որ մինչդատական վարույթը եզրակափակող խնդրո առարկա դատավարական ակտի դեմ բերված բողոքի քննության արդյունքում կայացված դատական ակտի անհապաղ կատարումը՝ օրենքով սահմանված ժամկետում բողոքարկված լինելու պարագայում, կարող է հանգեցնել իրավական անորոշության[15]: Այսպես, քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական վարույթը կարճելու մասին որոշման դեմ բողոքը բավարարելու և դիմողի իրավունքի խախտումը վերացնելու պարտականություն սահմանելու մասին դատական ակտի կատարումը ենթադրում է համապատասխան որոշման վերացում և նախաքննության վերսկսում, որի հետագա ճակատագիրը, սակայն, անորոշ է լինելու, օրինակ, առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված բողոքի քննության արդյունքում վերադաս դատական ատյանի կողմից այլ որոշում կայացվելու դեպքում: Վերադաս

[15] Տե՛ս սույն որոշման 6.3-րդ կետը:

դատական ատյանի կողմից տարբերվող որոշում կայացվելու դեպքում լրջագույն խնդիր է դառնալու արդեն իսկ վերսկսված նախաքննության պայմաններում ձեռնարկված դատավարական գործողությունների արդյունքում անձի իրավունքների հնարավոր սահմանափակումների իրավական հետևանքներին արձագանքելը: Խոսքը վերաբերում է այնպիսի իրավիճակին, երբ վերադաս դատարանի կողմից տարբերվող դատական ակտ կայացնելու պարագայում «առոչինչ» է դառնալու վերսկսված նախաքննությունը, այդ թվում՝ ձեռնարկված դատավարական գործողությունները, ձեռքբերված ապացույցները, ծագելու է այդ գործողությունների արդյունքում անձի իրավունքների հնարավոր սահմափակումների իրավաչափության հարցը, ինչը կարող է առաջացնել անձի խախտված իրավունքների վերականգնման անհրաժեշտություն: Խնդիրն ավելի է սրվելու այն պարագայում, երբ մինչև վերադաս դատարանի կողմից համապատասխան տարբերվող որոշում կայացնելը գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկված լինի առաջին ատյանի դատարան:

Այս առումով թերևս զուգահեռներ կարելի է անցկացնել դատախազի ցուցումների դեմ առարկություններ ներկայացնելու օրենսդրական կարգավորման հետ: Եթե ընդհանուր կանոնն այն է, որ քննիչը կարող է առարկություն ներկայացնել դատախազի ցուցումի դեմ՝ չկասեցնելով դրա կատարումը, ապա առանձին ցուցումների պարագայում, որոնց ցանկում նախատեսված է, օրինակ, նախաքննությունն ավարտելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու ցուցումը, քննիչը լիազորված է գրավոր առարկություն ներկայացնելու՝ առանց ցուցումը կատարելու: Այս դեպքում ևս օրենսդիրը ելնում է այն տրամաբանությունից, որ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելուց կամ նախաքննությունն ավարտելուց հետո վերադաս դատախազի՝ քննիչի առարկության հետ համաձայն լինելու դեպքում, մինչև ցուցումի կատարումն առկա վիճակի վերականգնումը հանգեցնելու է դատավարական անորոշության և անձանց իրավունքների հնարավոր ոչ իրավաչափ սահմանափակումների՝ դրանից բխող հետևանքներով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում միաժամանակ ընդգծել, որ նախնական դատական վերահսկողության պարագայում, օրինակ, անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ քննչական գործողության

կատարումը թույլատրելու մասին միջնորդության քննության արդյունքում կայացված դատական ակտերը ենթակա են անհապաղ կատարման, քանի որ առնչվում են վարույթի ընթացքում ծագած՝ միջանկյալ նշանակություն ունեցող և հրատապ լուծում պահանջող հարցերի, որոնց հապաղումը կարող է հանգեցնել վարույթի բնականոն ընթացքի խափանման: Այսպես, օրինակ, կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին միջնորդությունը բավարարելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման, ինչպես նաև այդ միջնորդությունները մերժելու դեպքում դրանց բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացված՝ առաջին ատյանի դատարանի որոշումից տարբերվող դատական ակտի անհապաղ կատարման անհրաժեշտությունը բխում է վարույթի բնականոն ընթացքն ապահովելու հրամայականից: Ի տարբերություն նախնական դատական վերահսկողության՝ հետագա դատական վերահսկողության նպատակը վարույթն իրականացնող մարմնի կողմից արդեն իսկ կատարված գործողության, կայացված որոշման կամ դրսևորած անգործության իրավաչափության գնահատումն է: Եվ ելնելով հետագա դատական վերահսկողության խնդիրներից՝ այդ իրավական գնահատականից բխող իրավական հետևանքները պետք է առաջանան համապատասխան դատական ակտը բողոքարկելու ժամկետներն անցնելուց հետո, իսկ բողոքարկվելու դեպքում՝ վերադաս դատական ատյանի կողմից համապատասխան որոշում կայացնելուց հետո:

Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում նաև բողոքաբերի այն փաստարկին, որ դատական պրակտիկան զարգացել է այն ուղղությամբ, որ այդ դատական ակտերն ի կատար են ածվում դրանցում նշված բողոքարկման ժամկետներն անցնելուց հետո, իսկ բողոքարկման դեպքում՝ վերադաս դատական ատյանների կողմից համապատասխան որոշում կայացնելուց հետո[16]:

22. Վերոշարադրյալի հաշվառմամբ, ինչպես նաև հաշվի առնելով սույն որոշման 16-18-րդ կետերում ներկայացված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ

[16] Տե՛ս սույն որոշման 6.3-րդ կետը:

դատարանը կրկնում է, որ դատավարական գործունեության իրավաչափության առնչությամբ վարույթի մասնակցի տրված գնահատականն ինքնին չի կարող վկայել սույն որոշմամբ վկայակոչված չափանիշները հաղթահարված լինելու մասին: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հատուկ քննչական ծառայության կողմից Հ.Փարսադանյանի՝ «Հաղորդում հանցագործության մասին» վերտառությամբ դիմումին գրությամբ պատասխանելն իրավաչափ է:

23. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Գ.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանի իրավունքի խախտման ու վարույթն իրականացնող մարմնին այն վերացնելուն պարտավորեցնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

24. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից դատական ակտ կայացնելիս թույլ են տրվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և փոփոխելու համար: Միևնույն ժամանակ, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գ.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանի՝ Առաջին ատյանի դատարան ներկայացրած բողոքը ենթակա է մերժման:

25. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Գարեգին Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանի բողոքի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021

թվականի մարտի 10-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 27-ի որոշումը բեկանել:

2. Դիմող Գարեգին Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Փարսադանյանի՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացված բողոքը մերժել:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ